ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Ք.Երևան 23-ը հունվարի 2018թ.,

ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Ղազարյան/ԳԱ/

Անդամներ՝ Ց.Ակոպյան/ԳԱ/

Գ. Թամրազյան/ԲԱ/

Մ.Մանուկյան /ԳԱ/

Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Ապրիկյան

1. «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի շրջանակներում «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին

1.1 «ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին **«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի** համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են և շտկման կարիք ունեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Ներկայացված հավելված 5.2 –ի հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներից Նաիրա Մխիթարյանը չունի միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորում և չի բավարարում մասնակից կազմակերպության կազմում աշխատանքային փորձի նվազագույնը 3 տարի պահանջը

2. Ներկայացված հայտի հավելված 2.1-ում և հավելված 5.2-ում նշված տեղեկատվությունների մեջ առկա է հակասություն՝մասնավորապես տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին հայտարարության մեջ /հավելված 2.1/ որպես շահառու նշված է Սերգեյ Վարդանի Ասատրյան , սակայն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում /հավելված 5.2/ Ալբերտ Ասատրյանը նշվել է որպես տնօրեն-բաժնետեր:

3. Չի ներկայացվել մասնակցի կրթական համակարգում 5 տարվա աշխատանքային փորձի հիմնավորում

4.Չի ներկայացվել ծառայությունների մատուցման առաջարկվող կարգ (մեթոդաբանություն)՝ աշխատանքների անվանումը, ծախսվող ժամանակը ,մեթոդաբանություն

5. ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքում պարզ է դարձել «Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը չի բավարարում հրավերով պահանջվող 10 տարի աշխատանքային փորձի պահանջը:

1,2 ՈՒստի գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը 1 աշխատանքային օրով/մինչև 22.01.2018թ/ և առաջարկել մասնակցին սահմանված կարգով շտկելու առկա անհամապատասխանությունները:

1.3 «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝

1.1 կետի 1-ին ենթակետի վերաբերյալ ներկայացրել է Նաիրա Մխիթարյանի աշխատանքային գրքույկի պատճեն, որտեղ բացակայում է որևէ գրառում «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ում աշխատելու վերաբերյալ, իսկ միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական և հաշվապահական կազմակերպությունների կողմից որակավորման վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

1.1 կետի 2-րդ ենթակետի մասով ներկայացրել է հրավերի հավելված 2.1 շտկված տարբերակը:

1.1 կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի մասով որևէ մեկնաբանություն չի տրվել:

, **1.1 կետի 5-րդ ենթակետի** մասով ներկայացրել է գրություն,որտեղ սահմանում է ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածը, սակայն գնահատող հանձնաժողովը գտնում է , որ համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 29-րդ հոդվածի 1-ին կետի մասնակիցն իրավունք ուներ սահմանված ժամկետում պահանջել հրավերի պարզաբանում, սակայն «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն որևէ պարզաբանում չի պահանջել:

1.4 Ուստի «***ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01***» **ծածկագրով** գնահատող հանձնաժողովը գտնում է, որ «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ն չի բավարարում հրավերով նախատեսված որակավորման պահանջները:

Հանձնաժողոովը որոշեց մերժել «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ -ի հայտը և վերջինիս տվյալները ուղարկել լիազորված մարմին՝ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու նպատակով:

1.5 «***ԵՊԼՀ-ԳՀԾՁԲ-18/01***» **ծածկագրով** գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդ տեղ զբաղեցնող «**Բի-Դի-Օ Արմենիա**» **ՓԲԸ**-ին և վերջինիս առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

1.6 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «**Բի-Դի-Օ Արմենիա**» **ՓԲԸ**-ի ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև

ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնելու մասին

2.1 . Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը՝ ժամը 11:00-ին, «Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամում, ք.Երևան, Թումանյան 42 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5 , դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Հ. Ղազարյան/ԳԱ/

Անդամներ՝ ---------- Յ.Ակոպյան/ԳԱ/

---------- Գ. Թամրազյան/ԲԱ/

---------- Մ.Մանուկյան /ԳԱ/

---------- Լ. Մարգարյան/ԲԱ/

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Գ.Ապրիկյան